



ՄԻՔՍՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԺՆՆԴՅԱՆ 125-ՄՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ*

ՄԻՔՍՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԺՆՆԴՅԱՆ 125-ՄՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱՇ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Ռեսպոբլիկայի աշխատավորները հանդիսավորությամբ նշեցին հայ ժողովրդի մեծ զավակ, նրա ազատության ու երջանկության համար մղված պայքարի անսկուն մարտիկ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը:

Հորելյանական տոնակատարությանը՝ մասնակցելու համար եղայրական ուսապուրիկաներից երևան էին ժամանել գրողներ, գիտնականներ, կուլտուրայի գործիչներ:

Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնի դահլիճը, ուր տեղի ունեցավ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոն, լիփ-լեցում էր: Այստեղ էին հավաքվել մայրաքաջարի բոլոր խավերի ներկայացուցիչները:

Թեմը տոնականորեն զարդարված է: Նրա խորքից դահլիճին է նայում՝ դափնյա պսակով երիզված, ազատության բոցաշոմլ մարտիկի պորտրեն:

Հորելյանական հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ, Կառավարական Հորելյանական հանձնաժողովն նախագահ Ա. Քոշինյանը:

Նալբանդյանի կյանքի և գործունեության մասին ընդարձակ գեկուցումով հանդես եկավ Հայաստանի Սովետական գրողների միության քարտուղար, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու է. Թոփչյանը: Զեկուցողը մանրամասն կանգ առավ Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության վրա:

* Ներկա նյութերը հավաքված են Սովետական Հայաստանում լուս տեսնող թերթերց և ամսագրերից: —ԽՄԲ:

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի անունից հանդես եկավ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ղեկատորի տեղակալ Ֆետիսովը: Ապա հանդես եկան Դոնի Ռոստովի քաղաքային Սովետի նախագահի տեղակալ Նիզամակը, եղայրական Ռուսական աշխատավորների անունից՝ բանաստեղծ Նագիբական, Բելոռուսիայի ներկայացուցիչ Ֆ. Նովկովան, Ղազախստանի ներկայացուցիչ պրոֆեսոր Մ. Բալակակը, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին, Աղրբեշանի ներկայացուցիչ Մ. Խոկանդրովը և ուրիշներ:

Հանդիսավոր նիստում ողջունի ճառով հանդես եկան նաև փիլիսոփայական գիտությունների դոկտոր՝ պրոֆեսոր Ի. Մումինովը (Ուզբեկստան), գրող Ի. Շիմկուսը (Լիտվա), Ն. Կորլետյանովն (Սոլդավիա), Լատվիական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Պ. Վալեսկալնը, պատմական գիտությունների թեկնածու Ա. Կանիմետովը (Կիրգիզիա), Թուրքմենական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գ. Զարիկը, էստոնական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Նուգիսը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ Բ. Մարտիրոսյանը կարդաց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Որոշումը՝ Միքայել Նալբանդյանի հիշատակը հավերժացնելու միջոցառումների մասին:

Ընթերցվեցին ողջունի հեռագրեր տաշիկ ժողովրդի, ինչպես նաև ՍՍՌՄ Կուլտուրայի մինիստր Գ. Ալեքսանդրովի, ՍՍՌՄ Գիտու-

թյունների ակադեմիայի պրեգիդենտ Ա.
Նիսմեյանովի, Լատվիական ՍՍՌ Մինիստր-
ների Սովետի նախագահ Վ. Լացիսի, ակա-
դեմիկոս Հ. Օբրելու, գրողներ Ա. Սուրկովի,
Պ. Տիշնայի, Մ. Շահնյանի և ուրիշ գիտ-
սականների, գրողների, կուլտուրայի և ար-
վեստի գործիչների կողմից:

Ապա նախագահողը հանդիսավոր նիստը հայտարարեց փակված:

Հանդիսավոր մասից հետո տեղի ունեցավ
մեծ համերգ, որին մասնակցեցին Երևանի
լավագույն կատարողական ուժերը:

Միքայել ՆԱԼՐԱՆԴՅԱԿԱՆԻ ՀՈԹԵԼԱՆԻ
ՆՇՈՒԽՄԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ.—Մուկվայի հասա-
րակայնությունը նոյեմբերի 25-ին նշեց Մի-
քայել Նալրանդյանի ծննդյան 125-ամյակը:
Երեկոն կազմակերպվել էր Սովետական Մի-
ության Կուստուրայի մինիստրության, ՍՍՌՄ
Գիտությունների ակադեմիայի և ՍՍՌՄ
գրողների միության կողմից: Զայկովսկու
անվան Համերգային դահլիճն էին Հավաք-
վել գրողներ, գիտնականներ, արվեստի և
կուստուրայի խոշոր գործիչներ, ուսանողներ,
Մոսկվայի բազմաթիվ աշխատավորներ: Ե-
րեկոյին ներկա էին նաև անդիհական գրող
Զեկ Լինդսեյը և Հնդկական գրող Ալի Մար-
դար Զաֆարին և Բալավանտ Գարբին:

Բեմում, թարմ ծաղիկներով շրջապատված,
դրված էր Նալբանդյանի մեծադիր պորտ-
ռեն:

Բացման խոսք ասաց ԱՄՈՒ Գիտովյուն-ների ակադեմիայի գլխավոր քարտուղար ակադեմիկոս Թոփչիկեր:

Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության նվիրված բովանդակակալից զեկուցումը՝ հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Շահնշանը:

Հանդիսավոր մասից հետո տեղի ունեցավ
մեծ համերգ, որին մասնակցում էին ՍՍՌՄ
Մեծ թատրոնի արտիստ, Հայկական ՍՍՌ-
ժողովրդական արտիստ Պ. Լիսիցյանը,
Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ
Գ. Գևառպարյանը և ուրիշներ: Մուսկայի
թատրոնների դերասանները նալբանդյանի
ստեղծագործություններից արտասանեցին
ուսանելու լեզվով՝ «Մանկության օրերը»,
«Ապոլոնին», «Ազատություն», «Իտալացի
աղջկա երգը» և այլ բանաստեղծություններ:

ՄԻՒԱՑԵԼ ՆԱԼՐԱՆԴՑԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ.— Մոսկվայի
Լենինի անվան և մյուս խոչը գրադարան-
ներում պատրաստվել են նալբանդյանին
նվիրված ցուցահանդեսեր։ Միութենական

իուշոր թերթերն ու ամսագրերը բազմաթիվ
հոդվածներ են նվիրել մեծ մտածողին:

Սոսկայում Ստոլեհնիկովան նրբանց-
քի № 16 տանը, որտեղ ապրել է Միքայել
Նալբանդյանը, փակցվել է Հուշատախտակի:
Հուշատախտակ է փակցվելու նաև նախկին
Լազարյան ճեմարանի պատին, որտեղ աշ-
խտել է Նալբանդյանը:

ՄՐՎԱՑՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՒԾԱՐՁԱՆԻ
ՀԵՄՆԱԴՐՈՒՄԸ երեկանութիւն.— Նոյեմբերի
26-ին Երևանում տեղի ունեցավ Միքայել
Նալբանդյանի հուշարձանի հիմնագրումը:
Այս առթիվ հուշարձանի հիմնագրման վայ-
րում (Նալբանդյան փողոցի վրա, Անասնա-
րութական ինստիտուտի մոտ գտնվող պու-
րակում) կայացավ Երևանի աշխատավորնե-
րի հանդիսավոր միտինգը: Այնտեղ էին եկել
քաղաքի աշխատավորության ներկայացու-
ցիչներ՝ գրողներ, գիտության և արվեստի
գործիչներ, բանվորներ և ուսանողներ: Ժա-
մը ուղիղ 5-ին ամբիոն բարձրացան Հայա-
տանի կառավարության ղեկավարները և հա-
րևան ուսպուրիկաններից հորելլանական
տոնի կապակցությամբ Երևան եկած հյուրե-
րը:

Միտինգը բացեց աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային Սովետի գործկոմի նախագահ Բ. Աստվածատրյանը: Խոսք վերցրեց ՍՍՌՄ գրողների միության վարչության ներկայացուցիչ Յու. Լիբերին-սկին: Այնուհետև ելույթ ունեցավ գրող Մտ. Զորյանը: Բանաստեղծությունը Վ. Զվարդինցևան մեծ խանդավառությամբ ուսաերեն արտասանեց Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունն իր թարգմանությամբ: Երևանի դպրոցների ուսուցչության անոնից ելույթ ունեցավ Վորոշիլովի անվան դպրոցի ոիկոնետող Վ. Անդրեասյանը:

Թաղսովիստի նախագահ Բ. Աստվածա-
տըրյանը ձգեց ժապավենը և թարմ ծաղիկ-
ների մեջ թաղված գրանիտե Հուշաքարի
վրայից սահեց կարմիր պատճեռը։ Հուշա-
քարի հղկած երեսի վրա գրված է.

ԱՅՍԵԴ ԴՐԿԵԼՈՒ Է
ՀԱՅ ՄԵԾ ՈԵՎՈԼՅՈՒԹԻՒՆ-
ԴԵՍՈԿՐԱՏ

ՍԻԹԱՑԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
ՀՈՒՅԱՆՉԱՆԸ
1829—1954

ՄՐԳԱՑԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ
ՄՊՏ.— Նոյեմբերի 28-ին, ի նշանավորումն
Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի,
մերձքաղաքային Մյասնիկյան գյուղն էին

եկել Ռուսութիւնի գրողները և քաղաքի ու շրջակա դյուլերի աշխատավորների բազմաթիվ պատգամավորություններ:

Դոնի բարձրագիր մի բլրի վրա, Կամենկա գետի ափի հայկական Ս. Խաչ վանքի պատի մոտ, ուր թաղված, է Մ. Նալբանդյանը, տեղի ունեցավ բազմամարդ միտինգ:

Միտինգը բաց արեց բանաստեղծ Աշոտ Գառնակերյանը:

Հայ ժողովրդի պանծալի զավակի հիշատակին նվիրված ճաներով հանդես եկան ուստուգի գրող Վ. Դ. Ֆումենկոն, Ռուսութիւնավորության տեղակալ Ատամանովը, «Բուստուգվելմաշ» գործարանի ինժեներ Վ. Շապոշնիկովը, Ռուսութիւնի համալսարանի դոցենտ Լ. Գրոմովը: Հայաստանի աշխատավորության անունից հուգված ելույթ ունեցան բանաստեղծ Աշոտ Գրաշին և բննադատ Գ. Ստեփանյանը:

Միտինգում ելույթ ունեցավ նաև Ռուսութիւն թիվ 12 դպրոցի դիրեկտոր Վ. Համբարձումյանը:

Միտինգից հետո Հայաստանի պատգամավորությունը նալբանդյանի գերեզմանին պատկան գրեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի անունից:

Հայ ժողովրդի մեծ ներկայացուցիչ՝ գերեզմանին պատկաներ դրվեցին նաև Հայաստանի գրողների միության, Ռուսութիւն ՍՄԿՊ քաղկոմի, Ռուսական գրողների և բազմաթիվ այլ կազմակերպությունների անունից:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄինիՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՀՀԵՍՏԱԿԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՅՈՒՆԸ ՄԱՍԻՆ.— Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը որոշել է.

1. Կանգնեցնել Միքայել Նալբանդյանի արձանը Երևան քաղաքում:

2. Հանձնարարել Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրությանը և Երևանի քաղաքային Սովետի գործկոմին՝ Հայտարարել լավագույն արձանի նախագծի մրցանակաբաշխություն և արձանի մրցանակաբաշխությանն ընդունված նախագիծը ներկայացնել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետ:

3. Լենինականի քաղաքի Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի շենքի առջև կանգնեցնել կիսանդրին:

4. 1955 թվականից սկսել Միքայել Նալբանդյանի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը:

5. 1955 թվականին Միքայել Նալբանդյանի ընտիր երկերի ժողովածուն հրատարակել ուստի ուստի պատճենագիրը:

6. Սահմանել Միքայել Նալբանդյանի անվան երկու լրացուցիչ ասպիրանտական թոշակ, յուրաքանչյուրը ամսական 800-ական ուսուցչություն և շափով և շորս ուսանողական թոշակ՝ յուրաքանչյուրը 400 ուսուցչություն շափով, այդ թվում,

ա) Մեկ ասպիրանտական և մեկ ուսանողական թոշակ Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում,

բ) Մեկ ասպիրանտական թոշակ Երևանի Խաչատուր Աբովյանի պետական մանկավարժական ինստիտուտում,

գ) Մեկ ուսանողական թոշակ Ա. Ժգանչովի անվան պետական մանկավարժական ինստիտուտում,

դ) Մեկ ուսանողական թոշակ Լևինականի Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:

Միքայել ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԿԱՎԱՆՔԻՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵԼ.— Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի առթիվ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրական թանգարանը կազմակերպել է հարուստ ցուցահանդես:

Ցուցադրված նյութերը լուսարանում են մեծ հրապարակախոսի, գրողի և քննադատի կյանքը, հասարակական-քաղաքական գործունեությունը և գրական ու քաղաքական կապերը:

Ներածական բաժնում ցուցադրված են Մ. Նալբանդյանի նախորդների և նրա ժամանակակիցների՝ Խ. Աբրյանի, Պ. Պողյանի, Ղ. Աղայանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահավելի, Բաֆիու ստեղծագործություններից մի քանիսը և իլլուստրացիաներ, թամինը պատկրում է գրական այն միջավայրը, որի պայմաններում գործել է Նալբանդյանը:

«ԸՆՐ-ՆԱԽԱՅԾԵԱՆ» բաժնում կարելի է տեսնել բազմաթիվ լուսանկարներ, որոնք պատկրում են հեղինակի ծննդավայրը, նրա հարազատներին: Ահա Մ. Նալբանդյանի ծննդյան վկայականը, որը ժամանակի ժանրության տակ դեղնել է: Հետաքրքիր է եկաներինա կայսրություն նախիջևանցիներին տված արտօնագիրը:

«ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ» բաժնում ցուցադրված է այն տան նկարը, ուր ապրել է գրողն իր ուսանողական տարիներին. դրա կողքին կախված են Մոսկվայի համալսարանի ուսանողներ Ռալիի, Սելենովի, Պիրոգովի նկարները: Այստեղ կան նաև մի շարք գրքեր նալբանդյանի դիտողություններուն: «ՀՅՈՒՍԽԱՓԱՅԱԼ ՉՐՃԱՅՐ» բաժինը ընդգրկում է 1848—1850 թվականները: Այս

բաժնի. Հետաքրքրական փաստաթղթերից է Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի ձեռքով կազմված «Հյուսիսափայլ»ի նախագիծը: Այստեղ տեղափորված էն Պուշկինից, էժեն Սյուից, Բերանժերից Մ. Նալբանդյանի կատարած բազմաթիվ թարգմանությունները: Ուշագրավ աշխատություն է Խ. Արովյանի «Վերը Հայաստանի» վեպի մասին նալբանդյանի հայտնած կարծիքը: Այս բաժնում կարել է տեսնել նաև նալբանդյանի Պետրովի համալսարանից ստացած թեկնածուական դիպլոմը և այն վկայականը, որով իրավունք է արվել նրան ուսուցչական պաշտոն վարելու:

«Նալբանդյանի ստեղծագործությունները» բաժնում կան իլլուստրացիաներ թիֆլիսից, Օշականից և այն վայրերից, որտեղ հղել է նալբանդյանը: Այստեղ է նաև նրա ուղևորությունների բարեկարգը: Բազմաթիվ փաստաթղթեր ցուց են տալիս արտասահմանում ունեցած նրա կապերը և ծանոթությունները: Այս բաժնում ուշագրություն է դրավում նալբանդյանի օգտագործած ծածկագիրը, ինչպես նաև թիրրերյանի՝ Փարիզից նալբանդյանին ուղարկած ծածկագիրը հեռագիրը:

«Նալբանդյանը և ուս պրոպագանիստները» բաժնում այցելուները տեսնում են Բակունինի, Տուրքիական նամակները նալբանդյանին և այլն:

«Նալբանդյանը Պետրոպավլովյան բերդում» բաժնում ցուցադրված են նալբանդյանի ձերբակալման հրամանը, բերդից հարազատներին և բարեկամներին գրած նամակները: Ուշագրավ են նաև նալբանդյանի դատին վերաբերող գործի անվանաթերթը, «Ղազար Փարագեցու թուղթը», «Հեղելը և ուրա ժամանակը», «Ազգային թշվառություն» հոդվածը, որը լույս է տեսել Ստ. Նազարյանի ստորագրությամբ «Հյուսիսափայլ»ում 1864 թվականին:

«Եկան և մահ» բաժնում՝ կան նյութեր նալբանդյանին Կամիշին աքսորելու և նրա մահվան վերաբերյալ: Մի շարք փաստաթղթեր ցուց են տալիս, որ նալբանդյանի թաղումը վերածվել է մասսայական ցուցի: Հուղարկավորությանը մասնակցել է նոր նախիջեանի գրեթե ամբողջ բնակչությունը:

Վերջին՝ «Մեր օրերը» բաժնում ցուցադրված են նալբանդյանի ստեղծագործությունների բազմաթիվ հրատարակությունները և նրա մասին եղած գրականությունը:

Միքայել նալբանդյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ցուցահանդեսներ են բացվել նաև Պետական համալսարանում, Երևանի Ա. Մատանիկյանի անվան հանրային դրագարանում, բաղաքային գրադարանում,

մանկավարժական ինստիտուտում, բազմաթիվ դպրոցներում, ինստիտուտներում և տեխնիկումներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՒՄՆԵՐԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ.— Նշանակալից տարեթիվ առթիվ ուսապուրբեկայի կոմպոզիտորները կերտել են մի շարք ստեղծագործություններ: Ռեսպոնսիվայի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Ա. Տեր-Ղեոնդյանը գրել է «Միքայել Նալբանդյան» խմբերգը, խոսք՝ Լ. Չուկասյանի: Արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Կ. Զաքարյանը ստեղծագործել է «Զոն Նալբանդյանին» խմբերգը, խոսք՝ Վ. Արամունու:

Երաժշտական ստեղծագործություններ են գրվել նաև մեծ գրողի բանաստեղծությունների տեքստերի հիման վրա:

Մ. Նալբանդյանի «Վազող ջրին» հայտնի ուսանավորի տեքստի հիման վրա օրերս մի երգ է ստեղծագործել կոմպոզիտոր Վ. Արարատյանը: Երիտասարդ կոմպոզիտոր է. Հովհաննիսյանը մշակել է նալբանդյանի «Մանկության օրեր»ի հիման վրա ստեղծված ժողովրդական մելոդիան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ.— Հորելյանական օրերին երիտասարդ նկարիչ Սուրեն Աղվայանը պատրուել է Միքայել Նալբանդյանի կոմպոզիցիոն մեծ պրոտրեն: Նկարիչը մտածողին պատկերել է Պետերբուրգում գտնված ժամանակ՝ իր առանձնասենյակում: Նալբանդյանի ողեշունչ դեմքը մտախոհ է ու տիպուր, նրա դեմքին արտահայտված է Հայրենիքի ճակատագրի, իր բազմաշարշար հայ ժողովրդի ճակատագրի հոգսը: Այդ պրոտրեն Աղվայանի երրորդ աշխատանքն է, որ պատկերում է հայ ժողովրդի մեծ զավակին: առաջինը՝ «Մ. Նալբանդյանը Պետրոպավլովյան բերդում»— դիպլոմային աշխատանքն էր, որ ներկայացրել է Երևանի Գեղարվեստական ինստիտուտի շրջանավարտների գործերի ցուցահանդեսում 1951 թվականին, իսկ երրորդը՝ «Հանդիպումը», որը վերաբարպում է Զերնիշեսկու և նալբանդյանի հանդիպումը:

Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի առթիվ գրողի քանդակային մեծ պրոտրեն ավարտել է քանդակագործ Եղիշե Վարդանյանը: Պրոտրեն պատրաստված է գիպսից՝ բնականից ավելի մեծ գիրքով:

Միքայել նալբանդյանի պրոտրեն նկարիչ է նաև նկարիչ-քանդակագործ է. Քոչարը:

ՊԼԱԿԱՏ-ԹԵՐԹԻԿ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ.— Հայաստանի Պետական հրատարակությունը Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի առթիվ լույս է ըն-

ծայել մասսայական տիրաժով՝ նրա կյանքն ու գործունեությունը լուսաբանող պահատ-թերթիկ։ Փաստական հարուստ նյութի և լու-սանկարների միջոցով այստեղ ցուց է տըր-ված բոցաշունչ հայրենասերի կյանքի ան-ցած ուղին։ Պլակատ-թերթիկում զետեղված են Մ. Նալբանդյանի մեծադիր լուսանկարը, հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի, նրա մեր-ձափոր բարեկամներ Ստ. Նազարյանի, Հա-ռովյանը Սվաճյանի, Գերցենի, Օգարյովի, ինչպես նաև Պերճ Պոռշյանի, Ղազարոս Ա-դյանի և ուղիշների լուսանկարները։ Կան նաև Մ. Նալբանդյանի կյանքի ու գործու-նեության հետ կապված վայրերի լուսա-նկարները, ինչպես նաև մի քանի փաստա-թղթերի ու նամակների փոտո-օրինակները։

Հորեկյանի օրերին լույս տեսավ նաև Մ. Նալբանդյանի գեղանկարչական դիմանկարը, որը կատարել է նկարիչ Սուրեն Ստեփանյա-նը։

ՄՐԺԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄԵԾ ԳՐՈԴ ՄԱՐԱՑԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐ-ԾՈՒԽԵՌԻԹՅԱՆԻ ՆԿԻՐՎԱԾ ԳԵՂԱՐՎԵՍԱ-ԿԱՆ ԼԻԱՄԵՏՐԱԾ ՖԻԼՄԻ ՍՑԵՆԱՐ ՍՏԵՂԾԵ-ԼՈՒ ՀԱՄԱՐ.— Հայ մեծ գրող Միքայել Նալ-բանդյանի ծննդյան 125-ամյակի կապակ-ցությամբ Հայկական ՍՍՌ Կովուուրայի մի-նիստրությունը Մ. Նալբանդյանի կյանքն ու գործունեությունը պատկերող լիամետրաժ գեղարվեստական ֆիլմի սցենարներ ստեղ-ծելու համար հայտարարել է մրցանակա-րաշնություն։ Առաջին կարգի մրցանակի համար սահմանված է 20.000 ռուբլի, իսկ երկրորդ կարգի համար՝ 15.000 ռուբլի։ Մշենարի ներկայացման վերջին ժամկետ է նշանակվել 1955 թվականի ապրիլի 15-ը։

ՄՐԺԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹՅԱՆԻ ԱՐԽԵՎԸ.— Հայ-կական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում, ամենայն խնամքով, պահպամ է Մ. Նալ-բանդյանի արխիվի մեծ մասը։ Այդ արխիվը ձեռք է բերվել սովորական կարգերի հաս-տատման առաջին տարիներին և հետագա-յում հարստացել նոր նյութերով։

Արխիվային նյութերը, որոնք բաղկացած են ավելի քան 500 ձեռագրերից, նամակնե-րից, լուսանկարներից, Նալբանդյանի կյանքի ու գործունեության հետ կապված պարբե-րականներից և այլ փաստաթղթերից՝ լույս են սփռում հայ մեծ գրող դեմոկրատի կյան-քի ուղղությամբ։

Առանձին հետաքրքրություն են իրենցից ներկայացման նաև անձնական իրերը, որոնցից մի մասը եղել է նրա սեն-յակում մահվանից հետո, ինչպես հայտնի է, Պետրոպավլովյան ամրոցում երեք տարի փակված մնալուց հետո, 1865 թվականի նո-

յեմբերի վերջերին Նալբանդյանը աքսորվում է Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, ուր անց է կացնում իր կյանքի վերջին մի բանի ամիսները (Մ. Նալբանդյանը վախ-ճանվել է 1866 թվականի մարտի 31-ին)։

Ահա նրա գրպանի ժամացույցը. Երկու կափարիչները դրսի կողմից նկարազարդված են, նրանցից մեկի վրա ներսի կողմից փո-րագրված է «Միքայել Նալբանդյան 1857 թ.»։ Զարդանկարները ունի նաև կաշվել դրամապա-նակը։

Նալբանդյանին պատկանող իրերի թվում են երկու կնիք: Դրանցից մեկը պատրաստ-ված է մալախիտից, մյուսը՝ մետաղից: Երկու կնիքներն էլ ունեն միևնույն խորհրդանշան՝ պատկերված է բռու:

Հետաքրքիր է սենյակի ջերմաշափը, որի վրա նշումները հայերեն են:

Թանգարանում պահպամ պահպամ պատկանող իրերի թվում են Նալբանդյա-նի մարտական ատրճանակը՝ գնված Լոն-դոնում, խոշորացուց մոնոկլը, երկու պատ-կերներ մարմարյա նորր շրջանակներով, փայտյա փոքրիկ մոխրաման՝ բերված Հընդ-կաստանից, հագուստի խոզանակ, սև փայ-տից պատրաստված մի փիղ իրու սեղանի զարդ և այլն։

Հազվագյուտ լուսանկարների թվին են պատկանում Մ. Նալբանդյանի վերջին նկա-րը, որը վերաբերում է 1865 թվականին, ինչ-պես նաև Նալբանդյանի նոր-Նախիչևանի հայրենական տան լուսանկարը, որը վերա-բերում է 900-ական թվականներին։ Այս տանն է ապրել ու մեծացել Նալբանդյանը։ Այստեղ է նա ձերբակալվել 1862 թվականի հունիսի 14-ին և տարվել Պետրոպուրգ՝ Պետ-րոպավուլյան ամրոցը։

Խ. Աբովյանի ՇԿԵՐԸ Հայաստանի» վեպը Նալբանդյանը կարդացել է Պետրոպավուլյան ամրոցում՝ 1863 թվականին։ Այդ գրքի (առաջին՝ 1858 թվականի հրատարակության) էջերից մեկում նա արել է իր դիտողություն-ները, իսկ վերջում նշումներ է արել վեպի այն էջերի վերաբերյալ, որոնցից գրաքննա-դատությունը հանել է գյուղի իշխանավոր-ների գեմ ուղղված երգիծական նկարագրու-թյունները։

ԾԿԵՐԸ Հայաստանինի այդ օրինակը նույն-պես պահպամ է թանգարանում։

Այստեղ հետաքրքիր, հուզող նյութեր կան Նալբանդյանի թաղման վերաբերյալ, ինչ-պես հայտնի է, Նալբանդյանի վերջին ցան-կության համաձայն, եղբայրները նրա ա-ձյունը տեղափոխել են նոր-Նախիչևան։ Նոր-Նախիչևանի նավահանգստում (Դոն գետի վրա) Նալբանդյանի աճյունը դիմավորելու համար հավաքված է եղել քաղաքի համար-յա ամբողջ բնակչությունը։

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՀԱՅՎԱԳՅՈՒԽԸ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ալեքսանդր
Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի հազվագյուտ գրականության բաժնում պահպանվում է Նալբանդյանի կարևոր աշխատություններից մեկը՝ «Երկրագործուրյունը ուրաքեն ուղիղ ճանապարհ» գիրքը, որը լույս է տեսել գրողի կենդանության ժամանակ 1862 թվականին Փարիզում։ Ալտեղ է գտնվում նաև 1910 թվականին Բուսոնում նույն գրքի լիբրահրատարակության օրինակը։

Հայ մեծ գրողի գրադարանում պահվող երկերի հազվագյուտ օրինակներից է 1868 թվականին Պետերբուրգում, Բ. Տեր-Գրիգորյանցի տպարանում հրատարակված «Ղազար Փարզեցու գրած բույրը» թարգմանություն և բացատրություն Մ. Նալբանդյանց գիրքը և 1882 թվականի «Արև» ամսագրի հավելվածու, որտեղ պատերված է Նալբանդյանի «Կենսագրություն Գեորգա Աբովյանց» հոդվածը։

Հանրային գրադարանի հազվագյուտ գրականության բաժնում կա 1903 թվականին «Եվրոպայի հայ ուսանողության միության» ժնում լույս ընծայած Նալբանդյանի բանասեղծությունների ժողովածուն՝ «Հայրենասերի տաղերը» խորագրով։

Ալտեղ է գտնվում նաև Նալբանդյանի կողմից թարգմանված և նրա առաջարանով 1858 թվականին Մոսկվայում լույս տեսած Ռ. Կեմանսի «Շիխուի դը Շեվրյով» գրքի միակ օրինակը։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ.— Մոսկվայում, Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի նախօրյակին սուսերեն լեզվով լույս է տեսել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության ինստիտուտի կողմից կազմված Մ. Նալբանդյանի փիլիսոփայական և հասարակական, քաղաքական ընտիր երկերի ժողովածուն։

Նալբանդյանի ընտիր երկերի ժողովածուին կցված է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Բ. Խաչատրյանի առաջնորդող հոդվածը, ուր տրված են Նալբանդյանի կենսագրության հիմնական գծերը և ապա հանգամանորեն լուսաբանված նրա քաղաքական, փիլիսոփայական և պատմական հայացքները։

Հոդվածի ընթերցողը գաղափար է կազմում, թե ի՞նչպիսի դեր է խաղացել Մ. Նալբանդյանը որպես գրականագետ և քննադատ և ի՞նչ ազդեցություն է թողել հայկական կուտուրայի զարգացման և հատկապես Պ. Պողյանի, Դ. Աղայանի, Գ. Սոնդուկյանի և 19-րդ դարի հատագյի հայ գրողների ստեղծագործությունների վրա։

Առաջին անգամ են թարգմանվել ուստիրեն և տեղափորվել ժողովածուում «Հայոց լեզվի պատմությունը» աշխատությունը, հատվածները «Մեռելահարցուկ» վեպից և «Միջիբար Սերաստացին» և Միջիբարյանները» հոդվածից և այլն։

Առաջին անգամ ուստիրեն թարգմանված բանաստեղծություններից ժողովածուում տեղ են գտել «Ապոլլոնին», «Խոալացի աղջկա երգը», Հարություն Սվամյանին նվիրած բանաստեղծությունները։ Արձակ երկերի հիմնական թարգմանությունը կատարել է Ս. Ա. Գամալյան, բանաստեղծությունները թարգմանել է Վ. Զվարդինցեան։

Գրքում տեղ են գտել նաև Նալբանդյանի նամակները։

Գրքի վերջում որպես հավելված կցված են մի քանի փաստաթղթեր, որոնք բնութագրում են Նալբանդյանի կապերը ուստական դեմոկրատական գործիչների հետ։

Նալբանդյանի այս ժողովածուն հրատարակվել է 10.000 օրինակ տիրաժով, 28 մամուկ ծավալով։

ՌՈՍՏՈՎՈՒՄ ՀԱՐԳՈՒՄ ԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏՈՎԿԱՐԸ.— Ռոստովում սերնդից սերունդ պատմվում է, թե ի՞նչպիսի կակիծով ու ակնածանքով դիմավորեց հասարակ ժողովուրդը հավատարիմ բարեկամի ու պաշտպանի աջյունը։ Դոնում ամենուրեք ժողովրդի ստվարաթիվ բազմությունները դիմավորում էին սգո թափորը։ Ռոստովի և Նախիչևանի հազարավոր բնակչներ, ուսւ թե հայ, իրենց խորին հարգանքն էին արտահայտում ազատության բոցաշունչ մարտիկի հիշատակին։

«Նախիչևանում, տագնապով հաղորդում էր Ռոստովի պահանջական բաժինը Մոսկվա, — դագաղը դիմավորեցին արտասովոր շուրջով և հարդանքով... ամբողջ քաղաքի բնակչության խուռներամ մասնակցությամբ»։

Միքայել Նալբանդյանը թաղվեց Ռոստովից դուրս գտնվող Ս. Խաչ վանքի բակում՝ ներկա Մյասնիկավան բնակավայրի մոտ։ Երկար ժամանակ ցարական պաշտոնյաները թուլ չեին տալիս բնակչությանը հարգելու մարտիկ գրողի հիշատակը։ Միայն 1902 թվականին նոր-Նախիչևանի հասարակությանը հաջողվեց հուշարձան կանգնեցնել Նալբանդյանի շիրմի վրա։ Գերմանական ժամանակավոր օկոպացիայի միջոցին Նալբանդյանի բրոնզե կիսանդրին, Ռ. Պատկանյանի կիսանդրու հետ, հանվեց և թաքցվեց։

1949 թվականին, Մ. Նալբանդյանի ծննդյան 120-ամյակի օրը, նրա հուշարձանը վերականգնվեց։ Այդ օրը Ռոստովի և Նախի-

շնանի բնակչության բազմամարդ՝ խմբերը՝ գիտնականներ, գրողներ, ուսանողներ, կոլունտեսականներ նորից եկան մեծ գրող-գեղարվատի գերեզմանի մոտ՝ հարգանք տալու նրա պայծառ աճյունին և ծաղկեփնչեր դնելու Հայրենիքի արժանավոր զավակի շիրմին։

Ներկայումս Մ. Նալբանդյանի գերեզմանը և նրա ամբողջ շրջապատը հիմնովին բարեփոխված է։

Ուստումի բնակիչները հետաքրքրությամբ են դիտում այն տունը, որտեղ ապրել է Նալբանդյանը։ Այդ տան պատին հաստատված հուշանիշակի վրա ոսկե տառերով գրված է, ու այս տանը ապրել է Հայ գրող, ուսուլուցիններ գեմոկրատ Մ. Դ. Նալբանդյանը։ Ծն. 1829 թ.—մեռ. 1866 թ.։

Սովետական Դոնի աշխատավորությունը հարգում է հիշատակը իրենց մեծ հայրենակցի, որ իսկական հայ հայրենասեր էր և միաժամանակ չերմ սիրով սիրում էր ուստի մեծ ժողովրդին։

Սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում երբեք չի խամրի Միքայել Նալբանդյանի հիշատակը, որը հանուն ժողովուրդների ազատության, հանուն աշխատավոր մարդկանց շահերի, հանուն ուստի և հայ ժողովուրդների հավերժական բարեկամության, խիզախաբար ընտրեց ազատության փշոտ ուղին, մինչև վերջ անցավ այդ ուղով և որպես մարտիկ ընկավ ուզմի դաշտում՝ ցարական բռնակալության դեմ մղած պարագում։

